ԵԹՈՎՊԻՈՅ ՄԷՋ

ՄԵՆԵԼԻՔ

Այս օրերուս մէջ Եթովպիա ենթարկուած է կարեւոր խնդրով մը. Մենելիք, որ մահամերձ է, կ՚ուզէ ըստ Նոր սովորութեան իր յաջորդը նշանակել տակաւին չըմեռած։ — Մեզ ամենուս ծանօթ է ի պատմութենէ որ Եթովպիոյ մէջ կայսրութիւնը բաժնուած ըլլալով այլ և այլ ռասերու, (որոնք ինքնավար թագաւոր են իրօք) յետ Նեկուսի մահուան, անհագին աղետից և յեղափոխութեան կը մատնուէր. և այն ռասը որ իր շուրջը կրնար հաւաքել աւելի բազմաթիւ զինուոր կամ ոյժ՝ նա հաւանականաբար թագաւոր թագաւորաց կամ Նեկուս – Նեկէստի կ՚ըլլար։

Սակայն Մենելիք, «թագաւոր թագաւորաց Եթովպիոյ» և «Առիւծ Յուդայի», ուզեց ազատել այս բարբարոս սովորութենէն իր երկիրը՝ և ձգել զայն այն խաղաղութեան և զօրութեան մէջ՝ որուն ինքը հասուցեր էր. որով իր մահուան անկողնէն կը հռչակէ Նեկուս Նեկէստի իր թոռը Լիկ Էիասու, երեքտասանամեայ (ծնած 1896ին)։

*

Մենելիք ծնած է 17 օգոստ. 1844ին, իր մայրը՝ Կալլա՝ գերուհի մ՚էր։ Թէև իր կենաց սկիզբները բնիկ եթովպացի մ՚էր և հեռու քաղաքակրթութենէ, բայց յետոյ շփմամբ եւրոպացի միսիոնարներու հետ՝ գիտցաւ հաւաքել իր վրայ քաղաքակրթութեան զարգացումները։

Նախ ինքը թագաւոր էր կամ ռաս Շիօայի, յետոյ օգնութեամբ իտալացւոց ինքզինքը «թագաւոր թագաւորաց» հռչակեց, երբ մեռաւ Յովհաննէս «թագաւոր թագաւորացը»։ Եւ զօրացած Կալլա՝ ռազմիկներով և իր զինուորներով յաղթեց Մանկաշիա ռասին որ ինքզինքը Յովհաննէսին ժառանգ կը հռչակէր. և այսպէս հաստատուեցաւ իր գահուն վրայ։

Այդ օրուընէ յետոյ՝ Մենելիք՝ գոհ իր յաղթութեամբ, եթովպական զինուորական ոյժին և քաղաքականութեան մեծ զարկ մը տուաւ, և կրցաւ հաւաքել իր շուրջը Եւրոպական պետութեանց պաշտօնեաները, դաշինք կռել և միակ ինքնավար տէրութիւն ըլլալ Ափրիկէի։ Իր աթոռն ալ՝ յետ 1880ի մեծ սովին, փոխադրեց իր նոր շինած մայրաքաղաքը՝ Ատտիս – Ապեպա։

Թայթու

Լիկ Էիասու, նոր Նեկուս – Նեկէստի, ստանձնեց Եթովպական գահուն ժառանգութիւնը 7 Նոյեմբերի, ռաս Թագմանայի խնամակալութեան տակ։

Բայց հիմայ որ Մենելիք Գահէն կը քաշուի՝ երիտասարդ թագաւորին շուրջը կը խտանան Աբիսինիոյ վայրենիներու ամպերը. արդեօք վերջինս պիտի կարենա՞յ յաղթել այդ փոթորիկին՝ որ կը սպառնայ իրեն։ . . .

Թ.

digitised by A.R.A.R.@